ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախնական զինվորական պատրաստությունը որպես ռազմահայրենասիրական դաստիարակության առարկա:

Կատարող՝ Արթուր Գևորգի Մինասյան

/անուն, ազգանուն, հայրանուն/

<<Մեղրաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ, Ձինղեկ, I խումբ

/դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

/անուն, ազգանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2022Թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ..... 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՄՎՈՒՄ Է ԴՊՐՈՑՈՒՄ..... 5
ՌԱՋՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ..... 7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր բնօրրան-հայրենիքը, նախախնամության կամքով գտնվելով արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ հանգուցակետում, ունեցել է ռազմաքաղաքական մեծ նշանակություն և բոլոր դարաշրջաններում անխտիր գայթակղության քար է դարձել աշխարհակալությունների համար: Եվ ահա այս ժողովրդին՝ Հայկական բարձրավանդակի բնիկ տիրոջը, վիճակված էր անդադրումպատերազմել տարբեր և տարաբնույթ ավարառուների, ջարդարարների և նվաճողների հետ: Հանգամանք, որը մշտապես կոփել է հայ զորականի ռազմավարական և մարտավարական որակները:

Բայց հոսեց ժամանակը, և կարծես թե հայ ժողովուրդը ,,մոռացավ՛՛, ավելի ճիշտ՝ ,,ուրացավ՛՛ իր նախնյաց դյուցազնական-արիական ավանդները և նորագույն-լուսավոր ժամանակներում փորձեր արեց իր ազգային, իր կենսական հարցերը լուծել դիվանագիտական հարթություններում: Ավա՜ղ… դիվանագիտական հանգույցները դեռևս լուծվում են զենքի միջոցով, ուժի միջոցով, քանզի դիվանագիտությունը և քաղաքականությունը զենքի, ռազմատնտեսական ուժի խոսափողերն են: Կան որոշ ,,մտածողներ՛՛, որոնք հայ ժողովրդին մեղադրում են քաղաքական և դիվանագիտական անկարողության մեջ: Հայոց երբեմնի հզոր դիվանագիտությունն ու քաղաքականությունը հարություն կառնեն հայոց բանակի հետ միասին: Բանակն ու դիվանագիտությունը՝ որպես պետականության առաջմղիչ ուժեր, մշտապես կապված են միմյանց: Դա հասարակական-պատմական օրինաչափություն է:

Եթե մենք մի փոքր շրջահայաց լինենք մեր ազգային արժեքներիգնահատման գործում, ապա մեզ համար կպարզենք, որ մեր նախնիները այլևայլ հավատամքների և փառաբանումների հետ միասին ունեցել են նաև զենքի պաշտամունք՝ գիտակցելով, որ

ստեղծագործածը կարող է գոյատևել միմիայն զենքի միջոցով: Զենքիփառաբանումը հայ մարդու համար սկսվում էր նրա օրորոցայինով և ուղեկցում էր նրան ողջ կյանքի ընթացքում:

Յուրաքանչյուր հայ ժառանգորդն պատասխանատուն է երբեմնի հզոր ու հավետ մեր չքնաղ հայրենիքի: Մեր երակներում հոսում է արյունը մեր հռչակավոր նախնյաց՝ արյունը արիների: Մեր նախնիք վայրի կամ բարբարոս քոչվորներ ու ասպատակներ չէին, նրանց սրարշավ հեծելագնդերից առաջ ընթանում էր նրանց առաջավոր մշակույթը և տարածվում, սփռվում էր աշխարհով մեկ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԴՊՐՈՑՈՒՄ

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում: Իսկ արդյունքները տեսանելի են բոլորին: Այս խնդիրների լուծմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, հանրապետությունում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին լուծում տալու, ինչպես նաև համատեղ միջոցառումների ծրագիր իրականացնելու նպատակով Պաշտպանության, Կրթության և գիտության նախարարությունների կողմից դեռ 2010 թ. դեկտեմբերին մշակված համատեղ ծրագրին մասնակցում են նաև Արտակարգ իրավիճակների, Սպորտի և երիտասարդության նախարարությունները և ՀՀ Ոստիկանությունը: Կառավարության այս տարվա որոշմամբ՝ ընդգրկվել են նաև Մշակույթի և Առողջապահության նախարարությունները: Աշխատանքներն ավելի կազմակերպված և արդյունավետ դարձնելու նպատակով ձևավորվել է նաև աշխատանքային խումբ:

Լուրջ աշխատանքներ են տարվում դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Նպատակն է հենց դպրոցից պատրաստել գրագետ, հայրենասեր զինվոր, իսկ բանակում նա կկատարելագործվի: Նախկինում՝ 1985-1986 թթ. նախնական զինվորական պատրաստությունն ընդհանրապես հանված էր դպրոցական ծրագրից, հիմա մեծ ուշադրություն է դարձվում այդ առարկային: Ուսումնական զենք ունեցող դպրոցների թվի աճ է գրանցվել: Կան օրինակելի դպրոցներ՝ կահավորված դասարաններով: Հայրենասիրությունը սկսվում է դպրոցում:

Հատկապես վերջին տարիներին մեծ ուշադրություն է հատկացվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Դպրոցն այն վայրն է, որտեղ երեխային պետք է հայրենասեր դարձնեն: Դպրոցների տնօրեններից, ուսուցիչներից և հատկապես զինղեկներից շատ բան է

կախված, քանի որ այսօրվա հայրենասեր աշակերտը վաղվա լավ զինվորն է և քաղաքացին: Ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության դասարանները պետք է հագեցված լինեն զորատեսակները, համազորային կանոնադրությունը, զինվորական կոչումները ներկայացնող հարուստ պաստառներով, որոնք ավելի կենդանի, իրական ու հետաքրքիր կդարձնեն դասանյութը: Դպրոցի բակում ու ներսում ծածանվող Եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն կներշնչեն: Այս մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ՝ անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի: Մթնոլորտը շատ է օգնում՝ հետաքրքրություն արթնացնել մեր պատմության, հերոսների, բանակի նկատմամբ:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց ազգային էպոս-դյուցազներգությունը, որին մենք հաղորդակցվում ենք մեր ծննդից սկսած, մեզ ուսուցանում է, որ մեր թշնամիները մեզ չեն հանդուրժում, չեն հանգստանում այնքան ժամանակ, քանի դեռ հայ դյուցազունների ձեռքին չի ցոլարձակում հրեղեն ,,Թուր Կեծակին՛՛: Իսկ մենք իրավունք չունենք մոռանալու, որ ազգային էպոսը ազգի կենսափորձի և իմաստության հանրագումարն է, ազգի անվերջանալի ու հարաշարժ շինությունը:

Զենքի նկատմամբ մեր նախնյաց պաշտամունքը նկատվում է ոչ միայն մեր ազգային էպոսի մեջ, այլև մեր նախնյաց թողած վավերագրերում: Սեպագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր նախնիները ունեցել են զենքի պաշտամունք, զենքի աստվածություն՝ ,,Խալդի /Առդի/ աստծո զենքեր՛՛ անվամբ: Առդի աստծո կայծակող սուրը նույն ինքը՝ հայ ազգային էպոսի Թուր Կեծակին է: Մեր սեպագիր վավերագրերը մեզ պատմում են, որ հայոց զորագնդերը նախ փառաբանում էին իրենց սուսերամերկ աստծուն. ,,Առդի աստվածը հզոր է, Առդի աստծո հրեղեն սուրը հզոր է՛՛, նոր միայն իջնում մարտադաշտ՝ հաղթելու անհողդողդ վճռականությամբ: Պարզվում է, որ աստվածներն անգամ հզորության համար զենքի կարիք ունեին: Եվ մեր նախնիները անսասան հավատով ոսկուց և այլ նյութերից կռել էին զենքեր՝ սուր, նիզակ, գուրզ, տապար, նետ ու աղեղ, մարտակառք, և խորին ակնածանքով պահում էին Առդի աստծուն ձոնված տաճարում: Բնավ էլ պատահականություն չէ, որ մեր բոլոր թշնամիները մեր ժողովրդի մեջ մշտապես քարոզել են աթեիզմ /աստվածմերժություն/, այն է՝ զինամերժություն: Նրանք ձգտել են մեզնից օտարել մեր ինքնատիպ ազգային գոյապահպան որակը: Եվ կարծես թե մասնակի հաջողություն ունեցան իրենց նենգ որոշումներում. ինչ-որ թմբիր իջավ մեր ազգային զգաստության վրա. դարերի տագնապախռով քառուղիներում ,,ուրացանք՛՛ մեր աստծուն և հատուցեցինք՝ կորցնելով մեր հայրենիքի 9/10-ը:

Դառնանք մեր քաջակորով նախնյաց սրբազան և ոգեղեն ավանդներին, որոնք մոլորվել են դարերի դավադիր որոգայթներում, և մենք դրանց լոկ թույլ արձագանքներն ենք լսում: Այսօր մեզ համարորպես ահազանգ, որպես սթափեցնող

ղողանջ թող հնչի հին հոռոմների դասական իմաստությունը. ,,Այն ժողովուրդը, որը չի կերակրում իր բանակին, ստիպված է կերակրել օտար բանակին՛՛:

ՆԶՊ առարկայի նպատակն է ծառայել որպես նախապատրաստական ազդակ ռազմական ասպարեզ մուտքգործելու շեմին, որպես հիմնավորում այն իրողության, որ

ազգապահպան այլևայլ խորհրդանիշներից ամենից առաջ ազգը պետք է ունենա ռազմական կարողություն և ռազմական հնարավորություններ՝ ազգային մնացած հատկանիշները պահելու և պահպանելու համար: Մեծ նշանակություն ունի բանակը, ռազմական ուժը պետության գոյապահպանման համար: Խիստ կարևոր է բանակի դերը ազգային խնդիրների իրագործման ճանապարհին:

Հայրենիքը պաշտպանելու սուրբ գաղափարը շատ հին է հայոց կյանքում: Ըստ էության՝ հենց հայրենիքի պաշտպանության դրվագով էլ բացվում է հայոց պատմությունը: Խոշաբի ճակատամարտից առաջ, որը տեղի է ունեցել Ք.Ա. 2492 թվականի օգոստոսի 11-ին /այստեղից էլ սկսվում է բուն հայոց տոմարը/,իր զինվորներին ուղղված կոչի մեջ Հայկը՝ հայոց զորապետը, հռչակում է հայրենիք ունենալու և այն պահպանելու միակ և անողոք պայմանը՝ ,,մահ կամ ազատություն՛՛:

Հայկի և նրա զարմի հերոսներով են սրբագործվում հայ ժողովրդի անունը, հայրենիքը, իշխանությունը: Նրանց վարքով ու բարքով, ավանդներով ու խորհուրդներով են պայմանավորվում մեր ազգային դիմագիծն ու բնավորությունը, մեր անցնելիք ճանապարհն ու պատմական առաքելությունը: Հայկն ազատագրական պայքարով է դրել մեր հայրենի տան հիմնաքարը՝ նախապես ազդարարելով. ,,Կա՛մ կմեռնենք, և մեր ցեղը Բելի ծառայության տակ կընկնի, կա՛մ նրան ցույց կտանք մեր բազկի զորությունը և կհաղթենք ու կապրենք ազատ՛՛: Հին աշխարհում հայրենասիրության, պատվասիրության և առաքինության բարձրագույն հասկացություն էր հայոց արքա ԱրաԳեղեցիկի կերպարը: Բյուրեղյա պարզությամբ ու վճռականությամբ նա իջավ մարտի դաշտ և նվիրաբերվեց իր հայրենիքին:

Հայրենիքի պաշտպանության գործին էր ուղղված նաև քրիստոնեության ընդունումը Տրդատ Մեծ արքայի և Գրիգոր Պարթև Լուսավորիչ կաթողիկոսի նախաձեռնությամբ:

Հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշեն ,,Վարդանի և հայոց պատերազմի մասին՛՛ երկում, որը հայրենասիրական մի հզոր կոթող է, հայրենիքի պաշտպանության գաղափարը, հայրենիքի սերը բարձրացնում է պաշտամունքի աստիճանի, որը բյուրեղանում է հետևյալ արտահայտության մեջ. ,,Ոչ իմացեալ մահ մահ է, իմացեալ մահ՝ անմահութիւն՛՛: Ավարայրի ոգին դարերի դժվար ճանապարհին ուղղություն է տվել հայոց ազատագրական գաղափարախոսությանը,թևածել է հայկական ազատամարտերի վրա:

Մեր պատմության ընթացքում մենք ունեցել ենք բազում հաղթական ու փայլուն ճակատամարտեր, որոնցից առավել արժանահիշատակ են հետևյալները. Ք.ա 68թ. Արածանիի ճակատամարտը, երբ Տիգրան Մեծը 18 հազարանոց զորքով ջախջախեց հռոմեական 52 հազարանոց բանակին:

Ձիրավի ճակատամարտը, որը տեղի է ունեցել 371 թ. Նպատ լեռան ստորոտում՝ Ձիրավի դաշտում: Այդ ճակատամարտին հայկական կողմից մասնակցում էին 90 հազար քաջակորով մարտիկներ Պապ թագավորի և Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, իսկ պարսկական բանակը 100 հազար էր, որին գլխավորում էր դավաճան Մերուժան Արծրունին: Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թ. Տղմուտ գետիափին /այժմ՝ Մակու/՝ Ավարայրի դաշտում, որի ժամանակ հայերը տվել են հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում միակ անգամ 15հազարից ավելի զոհ՝ 35 հազար, իսկ պարսիկների զոհերը 100 հազարից ավելի էին: Պարսկական զորքը գլխավորում էր Մուշկան Նյուսալավուրտը, իսկ հայկականը՝ Մեծն Վարդան Մամիկոնյանը:

482 թ. Ներսեհապատի ճակատամարտ: Հայերին կրկին դավանափոխ անելու նպատակով պարսիկները հարձակվեցին հայոց վրա 60 հազարանոց զորքով: Պարսիկների դեմ դուրս եկավ հայկական 40 հազարանոց զորքը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Այս անգամ էլ թշնամական զորքի կեսը ոչնչացվեց, և նրանք չհասանհաղթության:

1918 թվականի հայ-թյուրքական ճակատամարտերն առավել հայտնի են Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքլիսայի ճակատամարտեր անուններով: Այս հերոսամարտերի ժամանակ հայկական կողմն ուներ 20 հազար զինվոր ու աշխարհազորային, իսկ թյուրքերը՝ 30 հազար լավ սպառազինված զինվոր: Թյուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին, և նրանց ցեղասպան նպատակներն ի չիք դարձան:

Արդեն իսկ մեր օրերում՝ 1991-94 թթ. Արցախյան պատերազմիժամանակ մեր հայրենիքի սահմաններն ընդարձակվեց 12 հազար կիլոմետրով, և այն էլ այն դեպքում, երբ հայկական կողմը չուներ արդիական սպառազինություն, իսկ ադրբեջանցիներ ունեին 70 մարտական ինքնաթիռ և ուղղաթիռ, շուրջ 10 հազար վագոն զենք- զինամթերք, 1300 մարտական տեխնիկա և մեծ թվով զորք ու վարձկաններ: Բայց միևնույնն է, հայկական ոգին հաղթեց, հաղթեց, քանզի չկային դավաճաններ, և ազգը միակամ էր:

Հայոց մեջ ճակատամարտերն այլազգիների դեմ շատ-շատ են. Հռանդեայի ճակատամարտ-62 թ., Օշականի ճակատամարտ-336 թ., Ոսխայի ճակատամարտ-350 թ., Խաղխաղի ճակատամարտ-450 թ., Ակոռիի ճակատամարտ-482թ., Ներսեհապատի ճակատամարտ-482թ., Ճարմանայնի ճակատամարտ-482թ., Վարդանակերտի ճակատամարտ-703թ., Արձեշի ճակատամարտ-775թ.,Արձնիի ճակատամարտ-775թ., Արյան լճի ճակատամարտ-852թ., Ձկնավաճառի ճակատամարտ-910թ., Սևանի ճակատամարտ-925թ., Ծումբի ճակատամարտ-998թ., Սերկևլի ճակատամարտ-1021 թ., Մամեստայի ճակատամարտ-1152 թ., Ռավինի ճակատամարտ-1187թ., Ամբերդի ճակատամարտ-1196 թ., Կոտմանի ճակատամարտ-1221թ., Գառնիի ճակատամարտ-1225 թ., Մառիի ճակատամարտ-1266 թ., Եղվարդի ճակատամարտ-1725 թ., Հալիձորի ճակատամարտ-1727 թ., Արարատիճակատամարտ-1918թ. և այլն, և այլն…

Հայոց առաջին պետական կազմավորումը գրավոր աղբյուրներում հիշատակվում է Ք.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսին, այսինքն՝ մեր պետականությունն ունի արձանագրված 5000- ամյա պատմություն: Այն ունեցել է բացառիկ վերելքների ու սարսափելի անկումների շրջաններ: Եվ որպեսզի մեր

անկումները փոխարինենք վերելքներով, անհրաժեշտ է կերտել հայության առանձնահատկություններին ու հոգեկերտվածքին համապատասխանող կառավարման լավագույն համակարգ: Իսկ դրան հասնելու լավագույն ճանապարհը նոր սերնդի դաստիարակությունն է ազգային արժեհամակարգով: Այդ դաստիարակության համակարգի հիմքում պետք է լինի Մեծ Հայի տեսլականը. ամեն հայ մանուկ իբրև իդեալ /կատարելատիպ/ պետք է ունենա մեր պատմության մեծերին՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Արցախյան ազատամարտի հերոսները…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես, ի՞նչ է տալու ՆԶՊ առարկան սովորողներին. կամք, խիզախություն,համարձակություն, տոկունություն, ձեռք բերած գիտելիքների շնորհիվ՝ վստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Առարկայի դասաժամերին ստացած գիտելիքներն ու գործնական պարապմունքները կօգնեն շատ արագ և արդյունավետ կողմնորոշվելտեղանքում և արտակարգ իրավիճակներում, կտան անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և ունակություններ, որոնցով էլ զինակոչիկները, ունենալով բավարար պատրաստություն, վստահությամբ կմեկնեն Հայոց բանակ՝ հայրենիքի պաշտպանությանսուրբ գործում ներդնելով իրենց ավանդը:

Դե՛, ուրեմն առա՛ջ: Ավարտին մեջբերեմ Գարեգին Նժդեհի պատգամներից հետևյալը. ,,ԵՂԻ՛Ր ԲԱՑԱՐՁԱԿ… ԵՎ Ո՛Չ ՄԻ ԶԻՋՈՒՄ:ՀԱՆՑԱՆՔ Է ԶԻՋԵԼԸ: ԶԻՋԵԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԹՈՒՅԼ ԼԻՆԵԼ, ԱՄՈԹԱԼԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼ…՛՛:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. Հայկ Խաչատրյան ,,Հազարագիտարան՛՛, Երևան, 2003 թ.
2. Արտակ Մովսիսյան ,,Հայոց պետականությունը 5000-ամյա և… 20-ամյա՛՛, Երևան, 2011 թ.
3. Արտակ Մովսիսյան ,,Հայոց պատմություն՛՛, Երևան, 2012 թ.
4. Արտակ Մովսիսյան ,,10 հայ ականավոր արքաներ՛՛, Երևան, 2009թ.
5. Հայոց եկեղեցու պատմություն, 11-րդ դաս., Երևան, 2018թ.
6. Հայագիտությունը դպրոցում /հանդես/, թիվ 5, Երևան, 2012թ.
7. Բագրատ Ուլուբաբյան ,,Զրուցարան՛՛, Երևան, 1991թ.